ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-22/17
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ

ք. Երևան 12 12 2022թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Մ. Հուսնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիրգնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիրգնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը, <u>ինչպես նաև փորձաքննության դրական եզրակացություն ստանալու</u> օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 945 000 (ինը հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, <u>ինչպես նաև փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո՝</u> պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրա-

ցուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 /տասնմեկ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	«Մառա և դուստրեր» ՍՊԸ
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Ք.Երևան Բուզանդի 1/3
Հ/Հ՝ 1570027609970100	Գործ.հասցե՝ Երևան Վրացական 17/2
ՀՎՀՀ 01501898	Հ/Հ 2470100309110000
	ՀՎՀՀ 02700688
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«12» 12 2022թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԵրՀԿ վարչական /նախկին/ շենքի, Մարտունի և Ճամբարակ հեռուստակայանների տեխնիկական շինությունների տանիքների վերանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման

Ծառայության								
							կատարման	
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը /նկարագիրը՝ ստորև*/	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	71241200	ԵրՀԿ վարչական /նախկին/ շենքի տանիքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման	դրամ	380 000	380 000	1	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	Պայմանագիրը ուժի մեջ մտնելո օրվանից 30 օրացուցային /երեսուն/ օր
2	71241200	Մարտունի հեռուստակայանի շինության տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման	դրամ	225 000	225 000	1	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելո օրվանից 30 օրացուցային /երեսուն/ օր
3	71241200	Ճամբարակի հեռուստակայանի շինության տանիքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման	դրամ	340 000	340 000	1	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելո օրվանից 30 օրացուցային /երեսուն/ օր

ՆԿԱՐԱԳԻՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության ԵրՀԿ-ի վարչական շենքի (նախկին) տանիքի վերակառուցման և վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Ընդհանուր նկարագրություն

Շինարարության նկարագիրը՝ Կառույցը հատակագծում ունի ~12,0x~36,0մ չափեր: Առկա է նաև ~3,0x~6,0մ չափերով կցակառույց (աստիճանավանդակ): Կառուց-ված է հավաքովի ե/բ-ե կոնստրուկցիաներից:

Տանիքը քառալանջ է (աստիճանավանդակի հատվածում միա-լանջ), փայտյա կրող կոնստրուկցիաներով և թիթեղյա ծածկույթով:

Նախագծման ելակետային փվյալները

Վերանորոգվող շինության հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճենը)

Նախագծման առաջադրանք

<u>Նախագծում ընդգրկել հետևյալ աշխատանքները</u>

- Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները
- Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը
- Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը

<u>Նախատեսվող աշխատանքները</u>

- թիթեղյա ծածկույթի, ջրհորդանների, ջրահեռացման խողովակների և կմախքի փայտյա կառուցատարրերի ապամոնտաժում և պահեստավորում
- ջեռուցման համակարգի ընդարձակման բաքի և խողովակների վերատեղադրում և ջերմամեկուսացում
- ծածկի սալերի վրա առկա անցքերի բետոնացում
- խարամե ջերմամեկուսիչ շերտի տեղադրում (օգտագործել նաև տանիքում առկա խարամը)
- 5սմ հաստությամբ, ամրանավորված, բետոնե հարթեցնող շերտի տեղադրում, 3% թեքության ապահովում դեպի թվով 8 ջրհորդաններ
- 2 սմ հաստությամբ հարթեցնող շերտի տեղադրում ցեմենտ-ավազե շաղախով
- պարապետների ներսի և վերևի հատվածների սվաղում ցեմենտ-ավազե շաղախով
- թվով 8 հատ, գունավոր թիթեղից պատրաստված, ջրհավաք ծագարների և խողովակների տեղադրում (տրամագիծը՝ 120մմ)
- երկշերտ փափուկ ծածկույթի տեղադրում (ներառյալ պարապետները) վերևի շերտը ավազե-պատ
- Պարապետների ծածկում գունավոր թիթեղից պատրաստված գլխադիրներով
- նախատեսել դեպի տանիք բարձրացող արտաքին մետաղյա աստիճան, պաշտպանիչ ճաղավանդակով
- Շինարարական աղբի, ինչպես նաև տանիքում առկա աղբի մաքրում, իջեցում, բարձում ինքնաթափ մեքենա և տեղափոխում թափոնատեղ

Այլ պահանջներ

1.ԱՐՏՈՆԱԳԻՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍ ԵՆԹԱԴԱՍ «Ա1» (Արդյունաբերական, Բնակելի, Հասարակական շենքերի և շինությունների նախագծում՝ ճարտարագետ-կոնստրուկտոր):

2.Մասնակցություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության աշխատանքներին, դրական եզրակացություն ապահովելու նպատակով: Աշխատանքների համար վճարումը կկատարվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:

<u>Նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացնում է պատվիրատուն:</u>

3.Նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերը, նախահաշիվը/ ամբողջական փաթեթը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 4 /չորս/ թղթային օրինակով և 1 /մեկ/ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով): Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:

4.Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:

5.Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Մարտունու հեռուստակայանի շինության տանիքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Ընդհանուր նկարագրություն

Շինարարության նկարագիրը՝ Հեռուստակայանի շենքը քարե կրող պատերով, միահարկ շինություն է, հատակագծում 12,8x24,6մ չափերով: Կառուցվել է 1977 թվականին: Տանիքը հարթ է, որի փափուկ ծածկույթի ~90%-ը բացակայում է:

Նախագծման ելակետային փվյալները

Վերանորոգվող շինության հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճենը)

Նախագծման առաջադրանք

Նախագծում ընդգրկել հետևյալ աշխատանքները

- Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները
- Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը
- Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը

Նախատեսվող աշխատանքները

- Բետոնի հարթեցնող շերտը և պարապետները ամբողջությամբ մաքրել մասնակի պահպանված փափուկ ծածկույթի շերտից
- Մաքրել բետոնե հարթեցնող շերտի կարերը, և ի հայտ եկած ճաքերը և տեղադրել 2÷3 սմ հաստությամբ ամրանավորված ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ, պահպանելով գոյություն ունեցող թեքությունները
- Պարապետների վրա նախատեսել ամրանավորված սվաղ ցեմենտ-ավազե շաղախով, արտաքին հատվածը 40սմ բարձրությամբ
- Տեղադրել երկշերտ փափուկ ծածկույթ, ներառյալ պարապետները, վերևի շերտը ավազապատ
- Պարապետների վրա փափուկ ծածկույթի եզրագիծը լրացուցիչ ամրացնել շերտապողպատով
- Նախատեսել դեպի տանիք բարձրացող արտաքին մետաղյա աստիճան, պաշտպանիչ ճաղավանդակով
- Տեղադրել թվով 8 հատ ցինկապատ թիթեղից պատրաստված ջրհավաք ծագարներ իրենց խողովակներով (տրամագիծը՝ 120մմ)
- Շինարարական աղբի մաքրում, իջեցում, բարձում ինքնաթափ մեքենա և տեղափոխում թափոնատեղ

Այլ պահանջներ

1. ԱՐՏՈՆԱԳԻՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍ ԵՆԹԱԴԱՍ «Ա1» (Արդյունաբերական, Բնակելի, Հասարակական շենքերի և շինությունների նախագծում՝ ճարտարագետ-կոնստրուկտոր):

2.Մասնակցություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության աշխատանքներին, դրական եզրակացություն ապահովելու նպատակով: Աշխատանքների համար վճարումը կկատարվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:

Նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացնում է պատվիրատուն:

3.Նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերը, նախահաշիվը/ ամբողջական փաթեթը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 4 /չորս/ թղթային օրինակով և 1 /մեկ/ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով): Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:

4.Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:

5.Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքեր կատարելու համար պահանջվող լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

ՁԱՓԱԲԱԺԻՆ 3

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Ճամբարակի հեռուստակայանի տանիքի վերակառուցման և վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Ընդհանուր նկարագրություն

Շինարարության նկարագիրը՝ Հեռուստակայանի շենքը քարե կրող պատերով, միահարկ կառույց է, որը կառուցվել է 1976թ-ին: Հատակագծում ունի 12,9x24,3մ չափեր: Տանիքը քառալանջ է, փայտյա կրող կոնստրուկցիաներով և ասբոշիֆերից ծածկույթով:

Նախագծման ելակետային փվյալները

Վերանորոգվող շինության հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճենը)

Նախագծման առաջադրանք

<u>Նախագծում ընդգրկել հետևյալ աշխատանքները</u>

- Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները
- Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը
- Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը

<u>Նախատեսվող աշխատանքները</u>

- Ասբոշիֆերից ծածկույթի և փայտյա կոնստրուկցիաների ապամոնտաժում և պահեստավորում հեռուստակայանում
- 30սմx40սմ(h) կտրվածքով երկաթբետոնե պարապետի կառուցում
- Պարապետի խարսխում գոյություն ունեցող երկաթբետոնե գոտու հետ
- Խարամե ջերմամեկուսիչ շերտի տեղադրում (օգտագործել նաև տանիքում առկա խարամը)
- 5սմ հաստությամբ ամրանավորված բետոնե հարթեցնող շերտի տեղադրում 3% թեքության ապահովմամբ դեպի թվով 4 ջրհորդանները: Բետոնի մակնիշը՝ M250
- 2սմ հաստությամբ հարթեցնող շերտի տեղադրում ցեմենտ-ավազե շաղախով
- Անհրաժեշտության դեպքում արտաքին կողմից՝ պարապետի և պատերի հատման գծի սվաղում ~10սմ բարձրությամբ
- Թվով 4 հատ, ցինկապատ թիթեղից պատրաստված ջրհավաք ծագարների և խողովակների տեղադրում (տրամագիծը՝ 120մմ)
- Երկշերտ փափուկ ծածկույթի տեղադրում (ներառյալ պարապետները), վերին շերտը ավազեպատ
- Պարապետների վրա փափուկ ծածկույթի եզրագծի լրացուցիչ ամրացում շերտապողպատով
- Դեպի տանիք բարձրացող արտաքին մետաղյա աստիճան, պաշտպանիչ ճաղավանդակով
- Շինարարական աղբի,ինչպես նաև տանիքում առկա աղբի մաքրում, իջեցում, բարձում ինքնաթափ մեքենա և տեղափոխում թափոնատեղ

Այլ պահանջներ

1.ԱՐՏՈՆԱԳԻՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍ ԵՆԹԱԴԱՍ «Ա1» (Արդյունաբերական, Բնակելի, Հասարակական շենքերի և շինությունների նախագծում՝ ճարտարագետ-կոնստրուկտոր):

2.Մասնակցություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության աշխատանքներին, դրական եզրակացություն ապահովելու նպատակով: Աշխատանքների համար վճարումը կկատարվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:

<u>Նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացնում է պատվիրատուն:</u>

3.Նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերը, նախահաշիվը/ ամբողջական փաթեթը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն և ռուսերեն լեզուներով՝ 4 /չորս/ թղթային օրինակով և 1 /մեկ/ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով): Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:

4.Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:

5.Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար պահանջվող լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898	«Մառա և դուստրեր» ՍՊԸ Ք.Երևան Բուզանդի 1/3 Գործ.հասցե՝ Երևան Վրացական 17/2 Հ/Հ 24701003091100000 ՀՎՀՀ02700688
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«12» 12 2022թ. կնքված
ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-22/17 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	ԵրՀԿ վարչական /նախկին/ շենքի տանիքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման	380000	380000	380000	380000	380000	380000	380000	380000	380000	380000	380000	380000	380000
2	71241200	Մարտունի հեռուստակայանի շինության տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000
3	71241200	Ճամբարակի հեռուստակայանի շինության տանիքի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման	340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000

*** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մառա և դուստրեր» ՍՊԸ
Ք.Երևան Բուզանդի 1/3
Գործ.հասցե՝ Երևան Վրացական 17/2
Հ/Հ 2470100309110000
ՀՎՀՀ02700688

(ստորագրություն)

Կ.Տ.